

United Prayer

Issued by the Executive Committee of the
CONSTANTINOPLE CHRISTIAN WORKERS' UNION.
Headquarters: Bible House, Stamboul, Constantinople.

MARCH, 1923

ԱՂՕԹՔԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Աղօթող կեանք

Յիսուս՝ երբ օրուան յողնութիւններէն յետոյ կը հեռանար ընկերութեան ծոցէն, յաճախ իր այդ առանձնութեան պահերը կ'անցընէր աղօթքով: Ան աղօթքի մէջ կը գտնէր հանգիստ իր անձին: Աղօթքով էր որ կը պատրաստուէր անցընելու նոր օր մը գործունէութիւնով և օգտակարութիւնով լեցուն: Յողնիլ, յուսահատիլ չէր գիտեր Ան, քանզի գիտէր աղօթել:

Աղօթքը զօրութիւնն էր Յիսուսի կեանքին, և աղբիւրը՝ անսպառ ուժին:

Ի տես այս պայծառ իրողութեան չէ՞ր միթէ որ աշակերտները մօտեցան և խնդրեցին Անկէ, « Տէ՛ր, մեզի աղօթք ընել սորվեցուր »:

Ո՛ւր էր թէ կեանքի ձախողութիւններու հանդիպած, հսկայ արգելքներու և դժուարութիւններու առջև կանգ առած, կեանքի ալեկոծ ովկիանին վրայ փրփրաղէզ ալիքներու և լեռնաձև կոհակներու ձեռք խաղալիք գարձած ամէն հոգիներ աղօթք ընել գիտնային: Ո՛ւր էր թէ յուսահատութեան խոր վիհերուն մէջ լնկած, հոգերով և մտատանջութիւններով ծանրաբեռնուած, մեղքերու ծանր բեռան տակ ընկճուած, յոգնած ու խոնջած կեանքերու ամէնը աղօթող կեանքեր ըլլային:

Տարակոյս չկայ որ աղօթողներ շատ կան, սակայն իրապէս աղօթող կեանքեր, Յիսուսի նման աղօթողներ որչա՛փ քիչ են թուով: Չէ՛, չէ՛, աղօթք ըսել՝ աղօթք ընել չէ: Որչա՛փ շատեր դեռ պէտք ունին Յիսուսի երթալու և ըսելու, « Տէ՛ր, մեզի աղօթք ընել սորվեցուր »:

Աղօթքը հոգիին մաքուր և անապական օդն է: Աղօթող կեանքն է որ մաքուր, ազնիւ զգացումներով և առողջ գաղափարներով կը լեցունի: Աղօթող կեանքն է որ կանգնած՝ Սուրբին առջև կը ներշնչուի սուրբ կեանքի:

Աղօթքը հողիին շունչն է : Առանց աղօթքի մեռած է հողին : Մասնաթեման նուիրում , օգտակար կեանքեր՝ գործող , ապրող կեանքեր՝ աղօթող կեանքերն են :

Ի՛նչ անուշ է , ի՛նչ քաղցր է աղօթքի պահը . կեանքի է՛ն անուշ պահերէն է ան : Ան վերացումի , ներշնչումի , սրբացումի , նորոգումի և երկնային տեսիլքներու պահն է :

Յիսուս վայելեց այդ պահերը : Այդպիսի պահեր վայելեցին նաև ամէն անոնք որոնք Յիսուսէ սորվեցան աղօթք ընել :

Դո՛ւն ալ չե՞ս փափաքիր աղօթքի լեռները բարձրանալ և շնչել մաքուր օդը երկնային . չե՞ս ուզեր աղօթող կեանք մը ըլլալ , ապրիլ ու վայելել : Չե՞ս տենջար երթալ և տեսնել քու Հայրդ . պատմել Անոր քու հոգերդ , պարզել Անոր քու վիճակդ թշուառ ու դժբաղդ : Չե՞ս ուզեր ինզրել և առնել :

Ս . Պ . Մ .

ԻՆՉՊԷՆ ԶՕՐԱՅՆԵԼՈՒ Է ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նկարագիրը կը փոխուի մեր ընկերակցութիւններու ազդեցութեանը տակ : Ուէ մարդ միմիայն ջանալով չ'կրնար բարի ըլլալ : Արմատացող նկարագիր մը ընդհանրապէս գիտակցօրէն ընտրուած ազդեցութեանց անգիտակից հետեանքն է : Գտի՛ր բարեկամ մը , վստահէ անոր և սիրէ զայն , տե՛ս մեծ դաղափարական մը և ինքզինքդ նուիրէ անոր , զգա՛ դրքի մը զօրութիւնը և տողորուէ անոր շունչովը , գտի՛ր հոգիներու եղբայրակցութիւն մը՝ քու ներշնչումներուդ համապատասխան և կապուէ անոր , այսպէս , սիրելով բարեկամդ , նուիրուելով քու դատիդ , տողորուելով գրքէդ և եղբայրական գործակցութենէդ վերջ ալլես մի մտահոգուի նկարագրիդ մասին , որովհետև այն ինքնաբերաբար կը կազմուի արդէն : Դուք չէ կրնար Քրիստոսանման մը ըլլալը առաջադրելով և սոսկ աշխատելով զայն իրականացնել , բայց կրնաք Քրիստոսը ընտրել ձեզի Բարեկամ , Անոր Թագաւորութիւնը ձեզի նպատակակէտ , Ս . Գիրքը ընել ձեր Գիրքը և Եկեղեցիին Եղբայրակցութիւնն ալ ձեզի իբրև միջավայր և այսպէսով , ձեր գիտակցաբար ընտրած այս ազդակները անգիտակցաբար պիտի փոխեն ձեր կեանքը :

FOSDICK

« ՈՎ ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ԵՐԿԻՆՔՆ ԵՍ »

Մ եզի շատ հասարակ դարձած աղօթք մըն է Տէրունական Աղօթքը , շատ կրկնուելով իւր ազդեցութիւնը կորսնցնելու ենթակայ : Յաճախ անխորհուրդ , մեքենական , անպատկառ կերպով կ'արտասանուի ան : Այսու ամենայնիւ չկայ անկէ բարձր աղօթք մը . չկայ ուրիշ մը՝ անոր պէս ըլլալու հոգեւոր կեանքի անսպառ աղբիւր :

Աղօթքը Աստուծոյ կը մատուցուի . մենք «Հայր» կոչականով Աստուծոյ կ'ուղղենք մեր խօսքը : Պէտք է շնորհալ այս կարեւոր կէտը : Ինչո՞ւ Յիսուս այս Հայր բառը ընտրած է :

Ուէ կրօնքի ազբիւրը՝ իր Աստուծոյ գաղափարն է . բոլոր ուրիշ հաւատալիքներ ու վարդապետութիւններ , բոլոր կրօնական ձէսերն ու արարողութիւնը , բոլոր բարոյական օրէնք և կենցաղ՝ այդ կեղբոնական գաղափարէն կը բղխին : Կրօնք մը չի կրնար իր ազբիւրէն աւելի բարձր ըլլալ :

Միաստուածութիւնը իրրեւ փիլիսոփայական ըմբռնում՝ անհունապէս բարձր է բոլոր բազմաստուածեան կամ համայնաստուածեան գաղափարներէ : Բայց ցորչափ Աստուածութիւնը իրրեւ տիեզերքէն անջատ և հեռու , և արտաքնապէս միայն անոր ազդող կ'ենթադրուի , ցարդ գաղափար մըն է և չունի ոյժ՝ հոգեւոր խորունկ կեանք ազդելու : Հին Կտակարանի յայտնութիւնը Աստուծոյ մասին՝ գերազանց էր բոլոր ուրիշ կրօններու և փիլիսոփայութեան ըմբռնումներէն . հոն կը գտնենք մեկ Աստուած միայն , հոգեւոր , անտեսանելի , սուրբ , բայց և այնպէս տիեզերքի և մարդկութեան հետ կենսականապէս հաղորդակից : Դրժբախտաբար Հրէութիւնը մեր Փրկչին գալստեան ժամանակ՝ մեծապէս կորսնցուցած էր այս յայտնութիւնը , և հեռաւոր , բռնակալ , ինքնահաճ Աստուած մը կը պաշտէր , որուն սիրտը շինելու ջանալ պէտք էր անհամար մեծ ու պզտիկ արարողութիւններով և ծիսակատարութիւններով : Կրօնքը բեռ մը դարձած էր մարդոց և ոչ թէ հոգեւոր կեանք , կայտառ և անեցուն :

Յիսուս՝ իր կեանքով ու խօսքերով ըրաւ Աստուծոյ մասին կատարեալ յայտնութիւնը : Անիկա Աստուծոյ , տիեզերաց Արարչին , Հայրուբեան գաղափարը առաւ և զայն հիմ ու կեղբոն ըրաւ իր բերած նոր հոգեւոր կեանքին :

«Հայր».—Տիեզերաց Արարիչը անձ մըն է , ոչ թէ սկզբունք մը , գաղափար մը , վերացականութիւն մը , անանձնաւոր ոյժ մը , կոյր բախտ մը և կամ ամէն բան կանխորոշող ճակատագիր մը : Անիկա Հայր մըն է , այսինքն սիրող անձ մը : Աստուած արդար , միանգամայն զթած Հայր մըն է , և ոչ թէ բռնաւոր իշխան մը , անգութ , անզգայ և անողոր :

Աստուած է բոլոր հայրութեան նախատիպարը . « Ամէն ընտանիք երկնքի մէջ և երկրի վրայ Անկէ կ'առնէ իր անունը . » (Եփես . Գ . 15) : Ամէն ճշմարիտ հայր՝ Հայր-Աստուծոյ անդրադարձումն է միայն : Մարդիկ որչափ Աստուծոյ մօտենան և նմանին՝ այնչափ տիպար հայրեր կը դառնան :

Կը հետեի թէ Տիեզերքը , մանաւանդ Մարդկութիւնը , Աստուծոյ ընտանիքն է . իր զաւակներն են անոնք , իր սրաէն բղխած : Անոնք

իր հոգածութեան առարկայ են, թանկագին են իր աչքին: Իր արածներն ալ, մանաւանդ բանական արարածները, մարդիկ, պէտք է որդիական երկիրդածութեամբ սիրեն զինքը: Դժբաղդարար ամէն մարդ չի զգար այս որդիական յարաբերութիւնը, այսինքն՝ Աստուծմէ կախում ունենալու, միանգամայն սիրոյ և համարձակութեան զգացումը: Յիսուս իր երկրաւոր կեանքին մէջ՝ Աստուծոյ հանդէպ որդիական յարաբերութեան կատարեալ մարմնացումն էր, և այս է իր գերագոյն յայանութիւնը: Յիսուսի պէս զգացողներն են Աստուծոյ կատարեալ ընտանիքը. (Եփես. Բ. 19): Բայց Աստուծոյ փափաքն է ամենուն իրեն գալը: Տունը կեցող մեծ որդիով չի գոհանար, այլ կ'ուզէ որ տունէն հեռացած և օտարութեան մէջ թշուառացած անառակ որդին ալ իրեն դառնայ:

Մեր տառապեալ, յուսախար ժողովուրդին մէջ տարածենք այս աւետիսը — Երկնաւոր Հայր մ'ունինք, որուն սէրը տկար կամ թոյլ չէ, այլ հզօր. պղատոնական չէ, այլ գործնական. չէ փոփոխական, այլ հաստատուն, համատարած, անաչառ և սուրբ. որուն ներողամտութիւնը միացած է իր արդարութեան. որ հաւատարիմ է, և ո՛չ կրնայ մոռնալ, ո՛չ ալ ուրանալ Ինքզինք, իր Հայրութիւնը...

Մարդկային ցեղի ամենամեծ կարօտութիւնն է այսօր՝ Աստուծոյ Հայրութեան սկզբունքին ճանչցուիլը, որմէ բնականաբար կը բղխի մարդոց Եղբայրութեան սկզբունքը: «Վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է. և զուք ամէնդ եղբայր էք» (Մատթ. ԻԳ. 8,9):

Ե. Ս. Ք.

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՕՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՄԱՐԿՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ՄԱՐՏ 11-17 — ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ

- Կիր. — 9: 38-50: Քրիստոնէական Ընկերակցութիւնը
 Բշ. — 10: 1-16: Տղայոց ընդունելութիւնը
 Գշ. — 10: 17-31: Հարստութեան վտանգը
 Դշ. — 10: 32-52: Մտռայութիւնը ընկերակցութեան սէրն է
 Եշ. — 11: 1-11: Քաղաքի հրաւէր
 Ուր. — 11: 12-19: Քրիստոս տաճարին մէջ
 Շք. — 11: 20-33: Հաւատքի ընկերակցութիւնը

ՄԱՐՏ 18-24. — ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ

- Կիր. — 12: 1-27: Յուստենական կեանք
 Բշ. — 12: 28-40: Կրօնքի էութիւնը
 Գշ. — 12: 41-13: 8: Տալու իրական ոգին
 Դշ. — 13: 9-23: Քրիստոնէական սլաւասոխանատութիւն
 Եշ. — 13: 24-37: Աչալրջութիւն
 Ուր. — 14: 1-11: Քրիստոսի նուիրում
 Շք. — 14: 12-26: Հաղորդութեան ուխտը

ՄԱՐՏ 25 — ԱՊՐԻԼ 1. — ԻՐ ՊԱՇՏՕՆԻՆ ԼՐՈՒՄԸ

- Կիր. — 14 : 27-39 : Անճնանուիրումը
- Բշ. — 14 : 40-50 : Սատանային զօրութիւնը կ'զգայ
- Գշ. — 14 : 51-65 : Իր վերջին յայտարարութիւնները
- Դշ. — 14 : 66-72 : Իրեններէն լքուած
- Եշ. — 15 : 1-20 : Ժողովուրդէն մերժուած
- Ուր. — 15 : 21-41 : Իր վճարած գինը
- Շք. — 15 : 42-47 : Իր մարմնաւոր պաշտօնին վախճանը
- Զատիկի Կիրակին . — 16 : 1-20 : Իր պաշտօնին շարունակութիւնը

ՅԱՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

ԱՊՐԻԼ 2-7. — ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ

- Բշ. — Մատթ. 28 : 1-10 : Յարութեան առաւօտը
- Գշ. — » 28 : 11-22 : Պահապանին տեղեկատուութիւնը
- Դշ. — Ղուկ. 24 : 13-27 : Էմմաուսի ճամբան
- Եշ. — » 24 : 28-35 : Իր խօսակցութիւնը
- Ուր. — Յովհ. 20 : 19-25 : Աշակերաներուն հետ
- Շք. — » 20 : 26-29 : Թովմասին հետ ևս

ԱՊՐԻԼ 8-14. — ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ (Շար.)

- Կիր. — Յովհ. 21 : 1-14 : Յիսուս Գալիլեայի եղերքը
- Բշ. — » 21 : 15-24 : Խօսակցութիւն Պետրոսի հետ
- Գշ. — Ղուկ. 24 : 44-53 : Իր համարձուժը
- Դշ. — Ա. Կորնթ. 15 : 1-19 : Պօղոս և Յարութիւնը
- Եշ. — Ա. » 15 : 20-34 : Քրիստոս յարութիւն առած
- Ուր. — Ա. » 15 : 35-49 : Հոգևոր Մարմինը
- Շք. — Ա. » 15 : 50-58 : Ո՛վ մահ, ո՛ւր է քու խայթոցը

ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆԸ

Երբ Քրիստոսէ կը հեռանանք մեր մտահոգութիւնը կը սաստկանայ, որուն ամենասովորական և յաճախադէպ մասը կը կազմէ ապագայի մտահոգութիւնը : Ի՞նչպէս պիտի կատարենք մեր վաղուան դժուար գործը : Որ և է մարդ կը համարձակի՞ ուղիղ քայլը առնել առանց նկատի ունենալու հետեանքները : Զարմանալի, անսահման վախ մը կը ճնշէ մեր անձին վրայ, հիւսիսային կծու խորշակի մը նման : Ան կը սգայ գիշերուան պահերուն մէջ, և կը սուլէ մեր օրուայ պարտականութեանց միջոցին : Ան կեանքի պարտէզին վրայ կիջնէ գեղեցիկ խոստումներու պտուղին վրայ նստող եղեամբն նման : Ան կրնար սնպիչ ոյժ մը ըլլալ եթէ երբէք անթեղուած կարողութիւնը

արթընցնէր: Բայց դժբաղդութիւնը հոն է որ անձկայի մարդը վաղը տեսնելէ առաջ իսկ արդէն տկարացած կ'ըլլայ: Վաղը փաստած կամ քանդած է իր այսօրը: Գալիքին մտահոգութիւնը: Ի ձեռին եղող այսօրուան իրականութիւնը կ'առնէ մեզմէ: Որքան ատեն որ մէկը իր ներկայի ըրածին վրայ չ'է կեդրոնացած, չկրնար յաջորդ քայլին մտասին պայծառ լոյս մ'ուռնենալ: Առանց որոշ ներկայի մը, որուն համար հոգի կուտանք, ապագան գոյութիւն չ'ունի: Այս վայրկեանը մերն է, եթէ չ'կրնանք տիրանալ անոր, բնաւ չենք կրնար տիրանալ ուրիշի մը:

Անձկութիւնը կը քանդէ իր սեւեռակէտն իսկ, ան ոչ միայն մեզ կը զրկէ գալիքը իրագործելու մեր պատրաստութիւններէն, այլ նաև կը սպառէ այն շահագրգռութիւնն ու դօրութիւնը որոնք անհրաժեշտ են ներկայ վայրկեանի ճնշող պէտքերուն համար:

Բայց Բրիստոսի ներկայութիւնը որ կ'իշխէ մեր ներկայի մտածումներուն վրայ, մեր ապագան, մեր անձը կը պաշտպանէ վաղուան յարձակումներուն դէմ: Մեր ապագան Ան և անոր կամքն է: Այս վիճակով մենք թէ ներկայի յաղթութիւնը և թէ վաղուան նուաճումը ապահոված կ'ըլլանք: Բրիստոս կը պահպանէ և կը խտացնէ ուժերը ներկային մէջ, իրր գերազանց նախապատրաստութիւն մը ամէն պատահականութեան դէմ: Այն մարդը որ պատահական բանի մը կ'սպասէ չկրնար իրականապէս պատրաստուած ըլլալ ինքնին ներկայացող բանի մը առջև, մինչդեռ այն որ ներկայիս համար բան մը կը յայտնաբերէ, գալիքին առջև սպառազինուած կ'ըլլայ: Երբ մենք կը հետապնդենք մեր սեփական անձկալից ճամբան, մենք պարզապէս կը խուժինք, աստուածային կարգադրութեամբ, դէպի բաղխում վտանգաւոր պայմաններու մէջ, մինչև որ մենք հասկնանք թէ ապագան մեր բերը չէ այլ Տէրոջինը, և այն ատեն է որ մենք երկնային նպատակին հետ ներդաշնակարար կը յառաջանանք:

J. D. ADAM

ԽՌՈՎԵԱԼ ՍԻՐՏԸ

Սիրեւրնիդ յխոռովի ու չվախնայ:

Յովհ. ԺԴ. 72.

Իան Մըքլարըն երբ ուէ հիւանդի կամ վշտահարի տունը կանչուէր շարունակ Յովհաննու ԺԴ. Գլուխը կը կարդար հոն գանուող մարդոց: Ասիկա ոչ մէկ բանի հետ կը փոխէր: Երբ մէկը այլևս իր գիտակցութիւնը կը կորսնցնէ, կ'ըսէր, և կը կարդաս «Իմ հօրս տանը մէջ շատ մը բնակարաններ կան» հիւանդը պիտի ուշաբերի և մրմնջէ «բնակարաններ» և խաղաղութեամբ մեռնելէ առաջ պիտի սպասէ որպէս զի ամբողջացնէք կարգալով «Ուր որ ես եմ հոն պիտի ըլլաս դուն ալ»:

Այս տեսակ բախդորոշ վայրկեաններու մէջ, Աստուծոյ և Անոր զարմանալի փրկարար կարգադրութեանց մասին մեր Փրկչին տուած հաւատարկացումներուն մէջ բան մը կայ այնքան կենսարար, ամօքիչ և խաղարարար:

Բայց այս կեանքէն փոխադրուելու վերջին տաղնագներուն մէջ չէ միայն որ մենք պէտք ունինք Յովհաննու ԺԴ. գլխուն: Կեանքի մէջ կան այնպիսի դառն ցնցումներ երբ շատ հոռու գտնուող մահը կուզենք յաճախ որ մօտ ըլլայ մեզի: Պահեր, երբ մահը թերևս կրնայ լուծել մեր վիշտերը և կեանքը հանելուկ մըն է ինքնին: Ծանր հարուածներու ենթարկուած, մեր կացութիւնը վերիվայր եղած, ծանօթ վայրեր անհետացած՝ և մենք կորսնցուցած ենք մեր ուղին: Եւ ճիշտ մեր այս կարօտութիւններն են դորս Տէրը ընկերացուց իր շնորհատու խօսքին:

Մեր միտքերը ցրուած են, չենք գիտեր թէ ինչպէս վարելու ենք մեր մտածումները: Կը քշուինք դէպի շատ մը ճամբաներ որոնցմէ ոչ մէկը միւսէն նախընտրելի կը թուի մեզ: Մեր ներքին կեանքը կը նմանի աններդաշնակ նուազախումբի մը, առանց ղեկավարի, տակն ու վրայ եղած: Շուարած ենք, նաև վախի ենթակայ, Ամէն բան անորոշութեան մէջ է: Հետևելիք ամէն ճամբու վրայ կը նայինք վախկոտ վարանու մով մը: Եւ ճիշտ այս տաք գլխու և սառած սրտի կրկնակ պայմաններն են որ մեր Փրկիչը նկատի ունի և որուն համար մեզ կը բերէ իր հրաշալի պատգամը որ վերածնող վստահութիւն կուտայ. «Թող ձեր միտքերը չշուարին և ձեր սիրտը չվախնայ»:

Այս նեղութեան պահերուն մէջ ինչ պիտի ըլլայ մեր ապաւէնը: Մեր Տէրը մեզ կը կանչէ երթալու դէպի Կեդրոն մը, և միայն մէկ: Եթէ հեռանանք այդ կեդրոնէն ամէն ինչ թափառական և կեդրոնախոյս պիտի դառնայ, իսկ եթէ մնանք հոն, ամէն բան իրեն սահմանուած տեղի պիտի բռնէ:

«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք Ինձի», վստահինք Հօրը որ յայտնուեցաւ մեզ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ: Մեր հոգերու և վշտերուն ամբողջ ծանրութեամբը զմեզ նետենք իր հաւատարիմ և սիրող զօրութեանը վրայ: Փարինք Անոր, ոչ, այլ հանգչինք հոն, և մեր կեանքի ցաւալի իրողութիւնները Պիտի սկսին կարգադրուիլ Աստուծոյ սահմանած կարգովը: Եթէ Քրիստոս բարձրանայ մեր կեանքին մէջ, երբ Քրիստոսի յենիմք, Ան կրնայ նոյնիսկ մեր կեանքի ցնցող դէպքերը փոխել նախախնամական և բարեկամական իրողութեանց:

«Արտերնիդ չխռովի ու չվախնայ»:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԸ

Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզ:

Յովհ. ԺԴ. 27.

Բայց, հոգի մը կրնայ Քրիստոսի խաղաղութիւնը առնել և այսուհանդերձ իր վիշտերը կրնար չ'վերջանալ: Իրօք ալ, մեր Տիրոջ այս բառերուն շուրջը կան նաև ուրիշ բառեր որոնց այս տեղ ներկայութիւնը անհաշտ և հակասական կ'երևի: «Աշխարհը ատեց ձեզ» «Անոնք ձեզ պիտի վռնտեն իրենց սինակօղկներէն» «Դուք պիտի լաք և ողբաք»: Խաղաղութեամբ լեցուն ըլլալ կարծուած կեանքի մը մէջ ասոնք շատ տարօրինակ տարրեր են: Բացայայտ է որ Յիսուսի խաղաղութիւնը

հումանիշ չէ կայուն վիճակի հանդարտութեան: Ան ճոխութեան խաղաղութիւնը չէ: Աստուծոյ անկախ բան մըն է: Ան կրնայ տառապանքին քովն ի վեր գոյութիւն ունենալ, ան կրնայ կարօտութեան հետ ձեռք ձեռքի քալել:

Կեանքի մակերեսին վրայ կրնան փոթորիկներ պայթիլ, մինչ անոր կեդրոնին մէջ կը ախրէ ամենախոր հանդարտութիւն: Յիսուսի խաղաղութիւնը կեդրոնական և հոգեկան յարաբերութեան մը ներգաշնակութիւնն է: Ան միութիւնն ու հաղորդակցութիւնն է Աստուծոյ հետ: Հոգին հանգիստ է, ան այլևս չի թափառիր, ամէն գիշեր նոր դուռ մը չի բաղխեր, ան այլևս կայուն տեղ մը ունի:

Եթէ խաղաղութիւնը միմիայն հանդարտ և կայուն վիճակի մը հարցն ըլլար, մենք ինքնիրենս կրնայինք զայն ստեղծել: Մենք կրնայինք զայն փնտռել և գտնել ընկերային վերակազմութեան, արդարագոյն օրէնքներու, աւելի լուսամիտ անտեսութեան, աւելի լայն հաճոյքներու և աւելի մեծ քսակի մը մէջ: Բայց եթէ իսկական խաղաղութիւնը տառելապէս հոգեկան յարաբերութեանց հարց մըն է, ի՞նչպէս կարելի է զայն գտնել: Եւ, մանաւանդ, երբ այդ խզուած յարաբերութեան մը վերահաստատումն է, ո՞վ է որ խախտած անդամը նորէն ճիշտ իր տեղը պիտի զետեղէ: Յիշեալ խաղաղութիւնը կամքին ալ գործը չէ: Մարդկային հանճարով կարելի չէ զայն ձեռք բերել: Անիկա պարզ և մըն է, և պարզ և մեր Տէր Յիսուս Քրիստոսին: «Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզ»: Ան եկաւ թափառականը իր տունը վերադարձնելու: Ան եկաւ մեր յարաշարժ և խարխուլ վրանը հաստատուն բնակարանի մը վերածելու: Ան եկաւ վերջ մը դնելու մեր զարհուրելի գժտումին, որ արդիւնքն է «մեղքին» մեզ հաշտեցնելու Աստուծոյ հետ և մեր մեղսալից ու անհանգիստ թափառումը սուրբ խաղաղութեան վերածելու:

Եթէ ընդունինք մեր Փրկչին խաղաղութեան պարզ և մեր կեանքը երկու շնորք պիտի ստանայ—և դեռ ասոնք երկուքն են շատ մը առանձնաշնորհումներէն զորս հաշտուած հոգին կը վայելէ—մենք պիտի ունենանք աչք մը, «ներգաշնակութեան ոյժով հանդարտած», իրերը պիտի տեսնենք այնպէս ինչպէս որ են, ոչ չափազանցուած և ոչ ալ պիտի խարուինք փոխ անուած փետուրներէն: «Անոնք որոնց աչքերը կը տեսնեն չի պիտի աղօթանան»: Եւ երկրորդ՝ եթէ ունինք Քրիստոսի խաղաղութիւնը՝ գործերը հանդարտութեամբ պիտի վարենք: Այդ կեդրոնական խաղաղութիւնը պիտի ազդէ մեր արտաքին և մակերեսային գործառնութեանց վրայ: Ոչ մէկ շփոթութիւն, ոչ մէկ տենդոտութիւն, ոչ մէկ խուճապ: Դժկամակութեամբ կամ անպէտ աշխատանքներով ոչ մէկ ներոյժ (energy) պիտի սպառենք: Մենք հանդարտութեան մէջ պիտի զօրանանք: Որոտհեալ Աստուծոյ խաղաղութիւնը, որ կը գերազանցէ մեր երազներն իսկ, պիտի պահպանէ մեր սիրտերն ու միտքերը Յիսուս Քրիստոսով:

JOWETT